# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հունիսի 2024 թվականի N 554-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի N 535-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենքի 118-րդ հոդվածի 6-րդ կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> 37-րդ հոդվածի 1-ին կետով հիմք ընդունելով այն հանգամանքը, որ այդ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել <<Մրգաստան>> Կոոպերատիվին պատկանող Արմավիրի մարզի Խոյ համայնքի Մրգաստան գյուղի վարչական տարածքում 04-068-0010-0010 կադաստրային ծածկագրի տակ գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,03948 հա մակերեսով, հողամասի սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի պահանջների համաձայն:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման համար:

3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2024 թվականի հունիսի 7-ի << Հողամասի նկատմամբ իրավունքների վերականգնման մասին>> թիվ 535-Ա որոշումը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝** **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2024թ. հունիսի 17
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք
գ.Գեղակերտ, Մաշտոցի 30, 060-88-89-99, էլ. հասցե khoy.community@gmail.com


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունիսի 2024 թվականի N 555-Ա

## *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի N 500-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> 37-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, հաշվի առնելով կադաստրի կոմիտեում հաշվառված, չափագրման տվյալների մուտքագրման 2024ZERGRP, ծածկագիրը և հիմք ընդունելով Մարտին Նշանի Առաքելյանի դիմումը՝ իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկունք գյուղի Սայաթ-Նովայի փողոց 2 բնակելի տուն հասցեում կառուցված ինքնակամ շինությունները օրինականացնելու համար, կառույցը չի հակասում քաղաքաշինական նորմերը և չի առաջացնում սերվիտուտ, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների՝ ծրագրի պայմաններին.

### *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. Օրինականացնել քաղաքացի Մարտին Նշանի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկունք գյուղի Սայաթ-Նովայի փողոց 2 բնակելի տուն հասցեում գտնվող /իրավունքի պետական գրանցման վկայականի N 03012024-04-0069 / 04-052-0012- կադաստրային ծածկագրով 0,0821 հա փաստացի օգտագործվող

հողամասի վրա կառուցված ընդամենը 45,9 քմ արտաքին մակերեսով ինքնակամ շինությունները, ինչպես նաև ինքնակամ բացված 2 դուռ և 7 պատուհան, / 17,7 քմ մակերեսով բնակելի տուն, կառուցված՝ 2013թ., 27,6 քմ մակերեսով կիսակառույց շինություն, կառուցված՝ 2013թ., 0,6 քմ մակերեսով պարիսպ, կառուցված՝ 2013թ./:

2. Ինքնակամ կառույցների օրիկանացման համար սահմանված վճարը կազմում է 78068 /յոթանասունութ հազար վաթսունութ/ ՀՀ դրամ:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը Մարտին Նշանի Առաքելյանը /անձնագիր՝ AU0374447, տրված 02.08.2021թ, 057–ի կողմից/ պետք է 60-օրյա ժամկետում վճարի Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական եկամուտների **900325188150** հաշվեհամարին՝ 78068 /յոթանասունութ հազար վաթսունութ/ ՀՀ դրամ, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստան Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:

5. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2024 թվականի մայիսի 24-ի <<Ինքնակամ կառուցված շինությունն օրինականացնելու մասին>> թիվ 500-Ա որոշումը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2024 թվականի 17 հունիսի
Խոյ համայնք գ.Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք
գ.Գեղակերտ, Մաշտոցի 30, 060-88-89-99, էլ. հասցե khoy.community@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունիսի 2024 թվականի N 556-Ա

## *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, հաշվի առնելով կադաստրի կոմիտեում հաշվառված, չափագրման տվյալների մուտքագրման 2024MMDE2A, ծածկագիրը և հիմք ընդունելով Արուսյակ Ասատուրի Մարտիրոսյանի, Հայկազ Սիմոնի Սարգսյանի, Սուսամբար Սիմոնի Սարգսյանի և Լյովա Սիմոնի Սարգսյանի դիմումը՝ իրենց պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկունք գյուղի Ե. Չարենցի փողոց 20 բնակելի տուն հասցեում կառուցված ինքնակամ շինությունները օրինականացնելու համար, կառույցը չի հակասում քաղաքաշինական նորմերը և չի առաջացնում սերվիտուտ, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների՝ ծրագրի պայմաններին.

### *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. Օրինականացնել քաղաքացիներ Արուսյակ Ասատուրի Մարտիրոսյանին, Հայկազ Սիմոնի Սարգսյանին, Սուսամբար Սիմոնի Սարգսյանին և Լյովա Սիմոնի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկունք գյուղի Ե. Չարենցի փողոց 20 բնակելի տուն հասցեում գտնվող /իրավունքի պետական գրանցման վկայականի N 737937 / 04-052-0006-0009 կադաստրային ծածկագրով 0,1850 հա

փաստացի օգտագործվող հողամասի վրա կառուցված ընդամենը 98 քմ արտաքին մակերեսով ինքնակամ շինությունները, / 27,1 քմ մակերեսով խորդանոց, կառուցված՝ 2020թ., 27,2 քմ մակերեսով ավտոտնակ, կառուցված՝ 2020թ./, 42,9 քմ մակերեսով ավտոտնակ, կառուցված՝ 2010թ./, 0,8 քմ մակերեսով պարիսպ, կառուցված՝ 2010թ./:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման համար սահմանված վճարը կազմում է 139356 /մեկ հարյուր երեսունինը հազար երեք հարյուր հիսունվեց / ՀՀ դրամ:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը Արուսյակ Ասատուրի Մարտիրոսյանը /նույնականացման քարտ՝ 015960438, տրված 16.05.2024թ, 057-ի կողմից/, Հայկազ Սիմոնի Սարգսյանը /անձնագիր՝ AT0608076, տրված 11.12.2020թ, 057-ի կողմից/, Սուսամբար Սիմոնի Սարգսյանը /նույնականացման քարտ՝ 002950442, տրված 05.11.2015թ, 057-ի կողմից/ և Լյովա Սիմոնի Սարգսյանը /նույնականացման քարտ՝ 007973191, տրված 04.02.2016թ, 057-ի կողմից/ պետք է 60-օրյա ժամկետում վճարի Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական եկամուտների 900325188150 հաշվեհամարին՝ 139356 /մեկ հարյուր երեսունինը հազար երեք հարյուր հիսունվեց / ՀՀ դրամ, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստան Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

2024 թվականի հունիսի 17
Խոյ համայնք գ.Գեղակերտ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հունիսի 2024 թվականի N 557-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով այն, որ բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները, բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերը և չեն առաջացնում սերվիտուտ, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, հիմք ընդունելով այն, որ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկունք գյուղի բնակիչներ Արուսյակ Ասատուրի Մարտիրոսյանը, Հայկազ Սիմոնի Սարգսյանը, Սուսամբար Սիմոնի Սարգսյանը և Լյովա Սիմոնի Սարգսյանը դիմել են Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկունք գյուղի Ե. Չարենցի փողոց 20 բնակելի տուն /04-052-0006-0009 կադաստրային ծածկագիր /հասցեում գտնվող իրենց պատկանող / ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր 2024 թվականի հունիսի 4-ի սեղանամատյան 3758 / 0.1850 հա հողամասի և նրա վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով.

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ*

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկունք գյուղի Ե. Չարենցի փողոց 20 բնակելի տուն /04-052-0006-0009 կադաստրային ծածկագիր /գույքային միավորների նկատմամբ քաղաքացիներ Արուսյակ Ասատուրի Մարտիրոսյանի /ծնված 08.11.1956թ/, Հայկազ Սիմոնի Սարգսյանի /ծնված 14.08.1978թ/, Սուսամբար Սիմոնի Սարգսյանի /ծնված 03.03.1980թ/ և Լյովա Սիմոնի Սարգսյանի /ծնված

28.08.1985թ/ գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.1850 հա փաստացի օգտագործվող հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ / բնակելի տուն ՝ 73,5 ք/մ մակերեսով կառուցված 1981թ., կաթսայատուն՝ 3,2 ք/մ մակերեսով կառուցված 1981թ., ծածկոց՝ 37,3 ք/մ մակերեսով կառուցված 1981թ., մառան՝ 10,8 ք/մ մակերեսով կառուցված 1981թ. և լոգարան՝ 5,5 ք/մ մակերեսով կառուցված 1981թ./ :

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեին գրանցել Արուսյակ Ասատուրի Մարտիրոսյանի, Հայկազ Սիմոնի Սարգսյանի, Սուսամբար Սիմոնի Սարգսյանի և Լյովա Սիմոնի Սարգսյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4. Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկունք գյուղի 04-052-0006-0009 կադաստրային ծածկագրով հողամասին տալ նոր հասցե՝ Արմավիրի մարզ Խոյ համայնք գյուղ Ծաղկունք, Ե. Չարենցի փողոց 20 բնակելի տուն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

2024թ. հունիսի 17
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060-88-89-99, էլ. հասցե khoy.community@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հունիսի 2024 թվականի N 558-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ, 50-րդ կետերով և հիմք ընդունելով Արթուր Արմենի Մկրտչյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղի վարչական տարածքում գտնվող 04-055-0056-0012 կադաստրային ծածկագրի հողամասից կատարել գույքի բաժանում, նրանից առանձնացված՝ 04-055-0056- ծածկագրի՝ 0,051 հա հողամասին տալ՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Հայթաղ գյուղ, Մ. Խորենացու փողոց թիվ 22/1 հողամաս հասցեն, իսկ 04-055-0056- ծածկագրի 0,05 հա հողամասին տալ՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Հայթաղ գյուղ, Մ. Խորենացու փողոց թիվ 22 հողամաս հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝** **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2024թ. հունիսի 17
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հունիսի 2024 թվականի N 559-Ա

### ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հովտամեջ գյուղի վարչական տարածքում գտնվող 04-060-0105- կադաստրային ծածկագրով 0,002 հա հողամասին տալ՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Հովտամեջ գյուղ, թիվ 3 տարածք հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2024 թվական հունիսի 17
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հունիսի 2024 թվականի N 560-Ա

## ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Մոնթեավան գյուղի վարչական տարածքում գտնվող 04-078-0007- կադաստրային ծածկագրով 0,0149 հա հողամասին տալ՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Մոնթեավան գյուղ, 1-ին փողոց, 32/6 հողամաս հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2024 թվական հունիսի 17
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060-88-89-99, էլ. հասցե khoy.community@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հունիսի 2024 թվականի N 561-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն N 912-Ն որոշումները և նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին համայնքային նշանակության քաղաքացիական համալիր ծրագրերին և նրա զբաղեցրած հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և համաձայն <<Աստղիկ Գուրգենի Մանուկյան>> ԱՁ-ի կողմից կազմված հատակագծի և չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրը՝ 2024VGLWRJ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Մոնթեավան գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 04-078-0007- կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի՝ 0,0149 հա հողամասի վրա ինքնակամ կառուցված 66,3 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի նշանակության շինությունները ճանաչել օրինական և համարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Մոնթեավան գյուղի սեփականությունը:

2. Քանի որ 66,3 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի նշանակության շինությունների կառուցումն իրականացվել է Արտուր Ռոբերտի Գրիգորյանի /ծնված՝ 13.09.1983թ., ID 003710985, տրված 30.12.2014թ., 057-ի կողմից/ կողմից առաջարկել

նրան գնման նախապատվության իրավունքով ձեռքբերելու ինքնակամ կառուցված շինությունները և այդ շինություններով զբաղեցված 0,0149 հա հողամասը: Որոշման ընդունման օրվանից, օրինականացման մեկ քառակուսի մետրի համար 3627 ՀՀ դրամ սահմանված վճարը՝ 240471 /երկու հարյուր քառասուն հազար չորս հարյուր յոթանասունմեկ/ ՀՀ դրամ պետք է վճարի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական եկամուտների 900325188150 հաշվեհամարին, իսկ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Մոնթեավան գյուղի ֆոնդային եկամուտների 900325187137 հաշվեհամարին պետք է վճարի 181929 /մեկ հարյուր ութսունմեկ հազար ինը հարյուր քսանինը/ ՀՀ դրամ, մեկ քառակուսի մետր հողի համար՝ 1221 ՀՀ դրամ: 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

3. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման որոշման գրանցման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի աշխատակազմի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

4. Արմավիրի մարզի Խոյ համայնքի Մոնթեավան գյուղի 04-078-0007- կադաստրային ծածկագրով հողամասին տալ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գյուղ Մոնթեավան, 1-ին փողոց, թիվ 32/6 հողամաս հասցե:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԵԽԱԿՅԱՆ

2024թ. հունիսի 17
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Ս.Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հունիսի 2024 թվականի N 562-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով այն, որ բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները, բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերը և չեն առաջացնում սերվիտուտ, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, հիմք ընդունելով այն, որ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղի բնակիչ Հրայր Բաբկենի Ղազարյանը դիմել է Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս 21-րդ փողոց թիվ 6 հողամաս /04-021-0078-0016 կադաստրային ծածկագիր /հասցեում գտնվող իրեն պատկանող / ըստ Արմավիրի մարզի Արշալույս համայնքի տնտ. 12/988 քաղվածքի և սեփականաշնորհման հանձնաժողովի 12.11.1991թ. N 22 որոշման/ 0.1 հա հողամասի և նրա վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով.

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս 21-րդ փողոց թիվ 6 հողամաս /04-021-0078-0016 կադաստրային ծածկագիր /գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Հրայր Բաբկենի Ղազարյանի /ծնված 01.01.1967թ./ գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0,1 հա փաստացի և դրան կից 0,0065 հա ավել օգտագործվող հողամասի վրա

կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ / բնակելի տուն՝ 368,6 ք/մ մակերեսով կառուցված 1992թ.:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեին գրանցել Հրայր Բաբկենի Ղազարյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4. Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղի 04-021-0078-0016 կադաստրային ծածկագրով հողամասին տալ նոր հասցե՝ Արմավիրի մարզ Խոյ համայնք Արշալույս գյուղ 21-րդ փողոց թիվ 6 հողամաս:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

2024թ. հունիսի 17
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հունիսի 2024 թվականի N 563-Ա

## «ՍՄԱՐԹ ԱԳՐՈ ՍՈԼՈՒՇԸՆՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ղեկավարը ուսումնասիրելով **«ՍՄԱՐԹ ԱԳՐՈ ՍՈԼՈՒՇԸՆՍ» ՓԲԸ-ի** նկատմամբ հարուցված վարչական վարույթի գործը պարզեց՝

ՀՀ Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից կատարված արձանագրության և տեղազննության ակտի հիման վրա 2024 թվականի մայիսի 13-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, հարուցվել է վարչական վարույթ, ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արագած և Ծաղկալանջ գյուղերում գտնվող, սեփականության իրավունքով, **«ՍՄԱՐԹ ԱԳՐՈ ՍՈԼՈՒՇԸՆՍ» ՓԲԸ-ին** պատկանող /տնօրեն՝ Աշոտ Գրիգորյան/ Արագած գյուղում գտնվող՝ 04-014-0237-0046, 04-014-0237-0047, 04-014-0237-0048, 04-014-0237-0049, 04-014-0237-0050, 04-014-0237-0051 ծածկագրի տակ գտնվող և Ծաղկալանջ գյուղում գտնվող 04-051-0153-0025, 04-051-0153-0035 ծածկագրերի տակ գտնվող արոտավայրերում և 04-051-0153-0035 ծածկագրի տակ գտնվող ջրովի վարելահողի վրա գտնվող հողամասերի գործառնական նշանակությունը և հողատեսքը ինքնակամ փոխելու հարցի կապակցությամբ:

Վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցագիրը **«ՍՄԱՐԹ ԱԳՐՈ ՍՈԼՈՒՇԸՆՍ» ՓԲԸ-ի** տնօրեն Աշոտ Գրիգորյանին ուղարկվել է փոստային առաքմամբ 2024 թվականի մայիսի 14-ին /հիմք՝ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 2024 թվականի մայիսի 16–ին տրված N LO122665069AM ստացականը/, նշված բեռնային համարով առաքանու էլեկտրոնային տվյալների համաձայն՝ առաքանին հանձնված է ստացողին:

Ներկայանալով վարչական վարույթի լսումներին **«ՍՄԱՐԹ ԱԳՐՈ ՍՈԼՈՒՇԸՆՍ» ՓԲԸ-ի** տնօրեն Աշոտ Գրիգորյանը տվել է բացատրություն այն մասին, որ.

Արագած և Ծաղկալանջ գյուղերում գտնվող, սեփականության իրավունքով, **«ՍՄԱՐԹ ԱԳՐՈ ՍՈԼՈՒՇԸՆՍ» ՓԲԸ-ին** պատկանող, տնօրեն՝ Աշոտ Գրիգորյան, Արագած գյուղում գտնվող՝ 04-014-0237-0046, 04-014-0237-0047, 04-014-0237-0048, 04-014-0237-0049, 04-

014-0237-0050, 04-014-0237-0051 ծածկագրի տակ գտնվող և Ծաղկալանջ գյուղում գտնվող 04-051-0153-0025, 04-051-0153-0035 ծածկագրերի տակ գտնվող արոտավայրերում և 04-051-0153-0035 ծածկագրի տակ գտնվող ջրովի վարելահողի վրա գտնվող հողամասերի գործառնական նշանակությունը և հողատեսքը ինքնակամ փոխելու հարցի կապակցությամբ դեռևս 2023-2024թթ. կատարվել է հողային աշխատանքներ այգեհիմնման նպատակով, որի մասի պատկան մարմինները՝ համայնքի վարչական ղեկավարը, համայնքի ղեկավարը բանավոր տեղեկացվել են: 2023 թվականի ծառերի տնկման աշխատանքների ավարտից հետո դիմել ենք համայնքապետարան և արդեն ավարտած այգիների համար կատարել ենք հողամասի գործառնական նշանակության փոփոխություն: Այգեհիմնման վերոնշյալ հողամասերի վրա աշխատանքները ամբողջությամբ դեռևս ավարտված չեն, ուստի ծառերի տնկման /այգեհիմնման/ աշխատանքների ավարտից հետո ինչպես նախորդ տարիներին , այնպես էլ այս տարի ողջամիտ ժամկետում համապատասխան գրությամբ կդիմենք համայնքապետարանին հողամասերի գործառնական նշանակությունը փոփելու համար:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1–ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 2–րդ մասի 2-րդ պարբերությամբ, որի համաձայն՝ «Վարչական վարույթը կարող է կասեցվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49–րդ հոդվածի 3–րդ մասի 2–րդ պարբերությամբ, համաձայն որի՝ «Սույն հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» կետերով, ինչպես նաև 2-րդ մասով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է դրա կասեցման հիմք դարձած հանգամանքները վերանալուց հետո, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի կատարումն ապահովելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. **«ՍՄԱՐԹ ԱԳՐՈ ՍՈԼՈՒՇԸՆՍ» ՓԲԸ-ի** նկատմամբ հարուցված վարչական վարույթը կասեցնել:
2. Վարչական վարույթը կասեցնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, կամ հրապարակման պահից՝ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով, կամ ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

2024թ. հունիսի 17
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2024 թվականի N 564-Ա

### ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ կետի առաջին մասի 24 կետով, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Դաշտ բնակավայրի բնակիչ՝ Արտաշես Տարիելի Համբարձումյանի դիմումը և համայնքի ղեկավարի կողմից ստեղծված համապատասխան հանձնաժողովի դրական եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել արտոնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Դաշտ գյուղի վարչական տարածքում գտնվող Արտաշես Տարիելի Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող 04-037-0103-0012 կադաստրային ծածկագրով 0,3764 հա պտղատու այգու նկատմամբ մինչև 2026 թվականի հունվարի 1-ը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա.ՄԵԽԱԿՅԱՆ**

2024թ. հունիսի 18
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2024 թվականի N 565-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով, « Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3- րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 27-ի  N 168-Ն որոշման 7-րդ կետը.

**Որոշում եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատման մասին » N 168-Ն որոշման մեջ կատարել վերաբաշխում ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա.ՄԵԽԱԿՅԱՆ**

2024թ. հունիսի 18
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Խոյ
համայնքի ղեկավարի
2024 թվականի հունիսի 18-ի
թիվ 565-Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ

1. 01.6.1 խումբ ենթախմբի 5134 հոդվածը պակասեցնել 1200.0 հազար դրամով
2. 04.5.1 խումբ ենթախմբի 5113 հոդվածն ավելացնել 1200.0 հազար դրամով

Աշխատակազմի քարտուղար՝ Ա.Առաքելյան